334.6
Ա-11

ՅԵԿԱՄՏԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1773
ԳԼԱՎԼԻՏ 6692 (Բ)
ՊԱՏՎԵՐ 4091
ՏԻՐԱԺ 12.000

·334·6
Խ-11 Ա

1-MAR 2010

ԱՄԵՆԱՈՒՇԸ ՄԻՆՉԵՎ ՈՎՈՍՏՈՍԻ ՄԵԿԸ ԱՄԵՆ ՄԻ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԻՏԻ ԳԻՏԵՆԱ. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի յեվ կոլտնտեսկենտրոնի վորոշումը կոլտնտեսությունների 1931 թվականի յեկամուտների ռրինակելի կերպով բաշխելու մասին

I. ԲԱԺԻՆ

Կոլտնտեսությունների յեկամուտները ու բերքը ճիշտ բաշխելը՝ համաձայն յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի քանակի ու վարակի և նրա աշխատրբուդիում արձանագրված աշխորերի թվի, վճռական նշանակություն ունի կոլտնտեսությունների արտադրական ամրացման, աշխատանքի նկատմամբ յուրաքանչյուր կոլտնտեսականի նյութական շահագրգռվածությունն ավելացնելու, կոլտնտեսականների աշխատանքի արտադրողականության բարձրացման ու կոլտնտեշարժման հետագա աճման համար:

Կոլտնտեսականների հիմնական մասսայի զորավոր աճմանը համապատասխան, այս տարի բոլոր շրջաններում և բոլոր կոլտնտեսություններում անպայման պետք է վերացվեն անցյալ տարի յեկամուտների բաշխման մեջ գոյություն ունեցած թերությունները: Այդ թերությունները հետևյալներն եյին՝

ԽՍՀ-ՍՍՀԱ
Կոմ. Ա. Մասիսիանի
Ս. ՄՅՈՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

12491-57

12 SEP 2013

26.245

1· Ցեկամուտները բաշխվում էին ըստ չնչի և վոչ թե ըստ կատարված աշխատանքի քանակի ու վորակի:

2· Կուլակային ագիտացիայի ազդեցությամբ, առաջին կալված հացահատիկից կոլտնտեսականներին տրվում էր նրանց ամբողջ տարվա բաժինը միանգամից, վորով խախտվում էր աշխատանքային կարգապահությունը, վորը և հանդիսանում էր 1930 թ· բերքահավաքի ժամանակ մեր ունեցած մեծ կորուստների գլխավոր պատճառներից մեկը:

3· Ճիշտ կազմակերպված չեր կոլտնտեսականներին փողով և մթերքով ավանսներ տալու գործը և չկար վերահսկողություն նրա վրա·

4· Խճճված էր կոլտնտեսության յեկամուտների հաշվառումը և ճիշտ հաշվառման չեր յենթարկվում կոլտնտեսականների կատարած աշխատանքը·

5· Խճճված էին կոլտնտեսությունների հաշիվները այլ կազմակերպությունների հետ·

6· Կոլտնտեսական մասսաները բավարար չափով չեյին մասնակցում փողով և մթերքով ստացված յեկամուտների բաշխման կարգի քննարկմանը, ձգձգվում էր յեկամուտների բաշխումը·

7· Հողային և կոլտնտեսական որգանները բավարար չափով չեյին ղեկավարում յեկամուտների բաշխման պրակտիկան:

Ցեկամուտների բաշխման ասպարիզում անցյալ տարի թույլ տրված սխալներից խուսափելու համար, ԽՍՀ Միության Հողժողկոմատը և Կոլտնտեսենտրոնը պարտավորեցնում են հողային ու կոլտնտեսական որգաններին կիրառել հետևյալ ձեռնարկումները·

II· ԲԱԺԻՆ

1· Ցեկամուտները չի կարելի լավ բաշխել, առանց ճիշտ հաշվառման յենթարկելու կոլտնտեսականների կատարած աշխատանքը և փողով ու մթերքով նրանց ստացած բոլոր ավանսները: Ուստի ամեն մի կոլտնտեսություն պարտավոր է մինչև բերքահավաքի սկիզբը միանգամայն պարզ հիմքերի վրա դնել կոլտնտեսականի աշխատանքային գրքույկում նրա աշխատանքների թվի, ինչպես և նրան աշխատանքների հաշվին փողով ու մթերքով տրվող ավանսների գործը և հետագայում վոչ մի դեպքում չուշացնել կոլտնտեսականի գրքույկում արձանագրելու նրա աշխատանքային օրերը, կատարելով այդ առնվազն հինգ օրը մեկ անգամ:

2· Կոլտնտեսությունների վարչությունները պարտավոր են հատուկ խնամքով կազմակերպել հավաքված ամբողջ բերքի հաշվառումը և վոչ մի դեպքում թույլ չտալ մթերքները պահեստ տանել, առանց համապատասխան գրանցումների: Այդ նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել համապատասխան թվով կշեռքներ, իսկ յեթե այդ հնարավոր չի, բերքը չափել հասարակ ձևերով՝ ծավալի չափով, արկղներով, պարկերով, չափումներով և այլն:

3· Կոլտնտեսությունների վերատուղիչ հանձնաժողովները պարտավոր են առնվազն ամիսը յերկու անգամ ստուգել, թե վորքա՞ն ճիշտ են հաշվառման յենթարկվել մթերքները ու նյութերը, վորքա՞ն ժամանակին են գրանցվել ստացված յեկամուտները ու կատարված ծախսերը, վորքա՞ն ժամանակին և ճիշտ են գրանցվել աշխատանքային օրերը կոլտնտեսականների աշխատանքային գրքույկում:

Հարավային շրջաններում ամենաուշը մինչև ոգոստոսի մեկը և մյուս շրջաններում մինչև ոգոստոսի 15-ը յուրաքանչյուր կոլտնտեսության վերստուգիչ հանձնաժողովը պետք է դեկուցում տա կոլտնտեսականների ընդհանուր ժողովին (կամ լիազորների ժողովին), թե ինչ արդյունքներ է տվել աշխատանքային որերի գրանցումը կոլտնտեսականների հաշվեգրքույկներում:

III. ԲԱԺԻՆ

Կոլտնտեսության ընդհանուր յեկամտից կոլտնտեսականների միջև բաշխման յենթակա յեն.—

ա) պարենահացը և այլ մթերքները, բացի կոնտրակտացիայով պետությանը հանձնվելիք (վաճառվելիք) հացահատիկից և սերմացվի ապահովագրման ու հատուկ պարենային այն ֆոնդերից, որոնք կազմվում են կոլտնտեսությունների վորոշմամբ.

բ) կերերը, բացի այն կերերից, որոնք հանձնվելու յեն (վաճառվելու յեն) պետությանը, հատկացվելու յեն կոլտնտեսության ապրանքային կաթնատնտեսություններին, հանրայնացված անասունների կերակրման, ինչպես և կերի ապահովագրման ֆոնդերին.

գ) փողային միջոցները, բացի այն մասից, որով պետք է վճարվեն կոլտնտեսության պարտքերն ու հարկերը, ինչպես և այն փողերից, որոնք հատկացվում են հիմնական շինարարության պլանը կատարելու, ինվենտար և նյութեր գնելու, տնտեսության այլ ծախսերը ծածկելու և հատուկ հանրային ֆոնդ կազմելու համար:

2. Այն կոլտնտեսություններում, որտեղ աշխատանքները դեռևս չեն հանրայնացվել, ընդհանուր ժողովի վորոշմամբ պետք է հանրայնացվեն և մտցվեն կոլտնտեսության ընդհանուր յեկամտի մեջ: Աշխատանքների բերքահավաքը կատարվում է կոլեկտիվ ձևով:

Կոլտնտեսականների ընդհանուր ժողովը քննարկում և սահմանում է այն կարգն ու պայմանները, վորով հանրայնացվում են աշխատանքները:

3. Աշխատանքի այն բոլոր որերը, վոր կատարել է կոլտնտեսականը 1930 թվի հունվարի մեկից մինչև 1932 թ. հունվարի մեկը՝ հաշված նաև աշնանացանի, աշնանավարի, բազմամյա մշակությունների (ցանովի խոտեր, այգիներ և այլն) և հիմնական շինարարության առպարիզում նրա աշխատած բոլոր որերը, պետք է հաշվի առնվեն 1931 թ. յեկամուտը բաշխելիս:

IV. ԲԱԺԻՆ

Ընդհանուր յեկամտի պարենային մասը բաշխվում է հետևյալ ձևով՝

1) կատարվում է այն կոնտրակտացիոն պայմանագիրը, վոր կնքվել է արտադրանքը պետությանը հանձնելու (վաճառելու) համար.

2) կազմվում է սերմացվի ֆոնդ այնպիսի չափով, վոր ապահովվի 1932 թվականին ցանքի տարածության ընդարձակումն առնվազն 10–20 տոկոսով, համաձայն կոլտնտեսությունների ցանքերի ընդարձակման 1932 թ. պլանին, և կազմվում է սերմացվի ապահովագրման ֆոնդը ընդհանուր սերմֆոնդի 10–15 տոկոսի չափով.

3) ստեղծվում է հատուկ պարենային ֆոնդ, վորից պետք է՝

ա) մթերք մատակարարվի այն կոլտնտեսականնե-

րի ընտանիքներին, վորոնց աշխատունակ անդամների թիվը փոքր է և վորոնք չնայած իրենց բարեխիղճ աշխատանքին, չեն կարողացել աշխատել իրենց ընտանիքը պարենով ապահովելու համար.

բ) մթերք հայթայթվի կոլտնտեսությանը սպասարկող ուսուցիչներին, դյուգատնտեսներին, գոտեխնիկներին, անասնաբուժներին.

գ) ապահովվեն արտադրաց այն կոլտնտեսականներն ու նրանց ընտանիքները, վորոնք, աշխատունակ անդամների պակասության պատճառով, չեն կարող իրենց համար անհրաժեշտ քանակությամբ պարենային հացահատիկ և անասունների համար կեր ստանալ, վոր այդ արտադրանքները և նրանց ընտանիքները ըստանան նույնքան պարեն և կեր, վորքան ստանում է կոլտնտեսության մեջ բարեխղճորեն աշխատող կոլտնտեսականը: Եթե արտադրաց կոլտնտեսականի ընտանիքի աշխատունակ անդամները հրաժարվում են կոլտնտեսության մեջ աշխատելուց, ապա այդպիսի ընտանիքը կրկվում է սույն արտոնությունից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 3-րդ կետում մատնանշված պարենային ֆոնդից կոլտնտեսությունները բաց են թողնում պետության սահմանած գնով:

4. Կոնտրակտացիայի համաձայն հանձնված (վաճառված), սերմացվի հատկացված, ապահովագրման ու հատուկ պարենային ֆոնդերին հատկացված մթերքները դուրս գալուց հետո, մնացած պարենային մթերքների ամբողջ հիմնական մասսան բաշխվում է կոլտնտեսականների մեջ, համաձայն նրանց կատարած աշխատանքի քանակի ու վորակի և աշխդրքույկում արձանագրված աշխատրերի թվի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Կալման ընթացքին դուդընթաց և կոլտնտեսության կոնտրակտացիոն պարտավորությունների կատարմանը համապատասխան, կոլտնտեսականներին պարենային մթերքներով ավանսներ են տրվում այն արտադրանքի հաշվին, վոր հասնում է նրանց՝ իրենց աշխատրերի համաձայն: Ավանսները տրվում են կոլտնտեսության սահմանած չափով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.—Ամեն մի կոլտնտեսության մեջ, նայած կոլտնտեսականների մեջև բաշխվելիք պարենային մթերքների քանակի, սահմանվում է պարենային հացահատիկի այն ամենամեծ չափը, վոր ստանում է ամենից շատ աշխատանքային որեր ունեցող կոլտնտեսականը, ըստ վորում կոլտնտեսականն այդ սահմանված չափից դուրս իրեն հասանելիք յեկամուտն ստանում է փողով: Ավելի քիչ աշխատանքային որ ունեցող կոլտնտեսականը լավագույն կոլտնտեսականի համեմատությամբ ավելի քիչ է պարենային հացահատիկ ստանում:

V ԲԱԺԻՆ

Կոլտնտեսության կերի արտադրանքը բաշխվում է հետևյալ ձևով.

ա) կատարվում է պետությանը բոլոր կերերը հանձնելու (վաճառելու) պլանն այն չափով, վորը նախատեսված է կոնտրակտացիոն պայմանագրում.

բ) կազմվում է կոշտ և խտացրած կերերի ֆոնդ՝

կոլտնտեսական ապրանքային ֆերմաների և կոլտնտեսության հանրայնացված լծկան ու մթերատու անասունների պահանջները լրիվ բավարարելու համար, ինչպես և կազմվում է կերի պահեստի ֆոնդ անասնաբուծության ընդարձակելու նպատակով:

Հանրայնացված անասունների համար կազմված ֆոնդից պետք է առանձնացնել հատուկ անձեռնմխելի մասը գարնանացանի նախապատրաստման և անցկացման ժամանակ անասուններին կերակրելու համար:

Կոլտնտեսության ապրանքային ֆերմաների համար սահմանված ֆոնդերը հատկացվում են միմիայն այդ ապրանքային ֆերմաներին և կարող են մտնել միմիայն նրանց կարիքների համար.

գ) կոնտրակտացիոն պայմանագիրը կատարելուց և կերի ու պահեստի կերի ֆոնդը ստեղծելուց հետո, մնացած ամբողջ կերը բաշխվում է մթերատու անասուն ունեցող կոլտնտեսականների միջև, հաշվի առնելով նրանց աշխատանքային օրերը և նրանց մթերատու անասունների թիվը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մթերատու անասուն չունեցող կոլտնտեսականներն իրենց հասանելիք յեկամտի բաժինը կերով ստանալու փոխարեն, ստանում են փողով:

դ) այն կոլտնտեսականը, որը մթերատու անասուն ձեռք կրերի բերքը բաշխվելուց հետո, կարող է անհրաժեշտ քանակով կեր ստանալ պահեստի կերի ֆոնդից՝ իր աշխատանքային օրերի թվի համաձայն:

VI ԲԱԺԻՆ

Կոլտնտեսությունների դրամական յեկամուտներից, 1931 թվականին մուծվելիք հարկերը, ապահովագրական մուծումները և ստացած վարկերի պարտքը վճարելուց հետո,

1. Հին կոլտնտեսություններում 15 տոկոս և 1930 թվի հոկտեմբերից հետո կազմակերպված կոլտնտեսություններում 10 տոկոս հատկացվում է այն անբաժան ֆոնդին, որի նպատակն է դնել մեքենաներ, լծկաններ ու մթերատու անասուններ և ծախսել հիմնական շինարարության վրա:

Անբաժան ֆոնդը կազմվում է փողով (ռուբլիներով):

2. Յերկու տոկոս հատկացվում է կոլտնտեսականների հանրայնացված գույքի, գլխավորապես նրանց հանրայնացված մթերատու անասունների արժեքը վճարելու համար:

3. Մեկ և կես տոկոս հատկացվում է պարգևատրման ֆոնդին, որով պետք է պարգևատրվեն լավագույն կոլտնտեսականները, հարվածայիններն ու բրիգադիրները:

4. Մեկ և կես տոկոս հատկացվում է ոգնելու համար այն կոլտնտեսականներին, որոնք ուղարկվում են այլ և այլ դասընթացներ սովորելու նպատակով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն շրջաններում, որտեղ դեռևս համատարած կոլեկտիվացում չկա, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում հիշատակված ֆոնդը բաշխվում է հանրայնացված գույքի համաձայն: Այդ ֆոնդի չափը պետք է կազմի յեկամտի հինգ տոկոսը:

5. Յերկու տոկոս հատկացվում է կուլտուր-կենցաղային ֆոնդին:

6. Փողի մնացած ամբողջ մասսան, վերոհիշյալ ֆոնդերին հատկացումներ կատարելուց և արտադրա-

կան ծախսերը վճարելուց հետո, բաշխվում է կոլտնտեսականների միջև, համաձայն յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքային գրքույկում արձանագրված աշխատանքային օրերի թվի:

VII ԲԱԺԻՆ

Ցեկամուտների բաշխման կարգն ու ժամկետները սահմանում է կոլտնտեսության վարչությունը և հաստատում է կոլտնտեսականների ընդհանուր ժողովը, ղեկավարվելով հետևյալ դրույթներով.

1. Կոլտնտեսությունների վարչությունները պարտավոր են 1931 թվի յեկամուտներից կոլտնտեսականներին հատնող բաժինը բաշխել նրանց միջև 1932 թվականի հունվարի 15-ից վոչ ուշ:

2. Մինչև կոլտնտեսության մեջ յեկամուտները վերջնականապես բաշխվելը, կոլտնտեսականների կարիքները բավարարելու համար՝ կոլտնտեսության վարչության վորոշմամբ կարելի յե կոլտնտեսականներին ավանս տալ փողով և մթերքով, բացառապես ի հաշիվ կոլտնտեսականների ունեցած աշխատանքային օրերի, ընդ վորում ավանս կարելի՝ յե տալ միմիայն այն կոլտնտեսականներին, վորոնք կատարում են կոլտնտեսությունների վարչության աշխատանքային առաջադրանքները:

3. Կոլտնտեսականի հետ վերջնական հաշիվ տեղնելիս նրան հասանելիք յեկամուտների ընդհանուր գումարից պետք է պահել տարվա ընթացքում նրան մթերքով ու փողով տրված բոլոր ավանսները:

4. Կոլտնտեսությունների վարչություններին իրավունք է վերապահվում մթերքի ու փողի ավանսից զրկել այն կոլտնտեսականներին, վորոնք վատ են աշխատում բերքահավաքի, աշնանացանի և աշնանավարի ժամանակ: Այդպիսի կոլտնտեսականներին ավանս տալը պետք է հետաձգել վերջին հերթին:

5. Պարտավորեցնել կոլտնտեսությունների վարչություններին հարավային շրջաններում մինչև 1931 թվի հոկտեմբերի մեկը, իսկ մյուս շրջաններում մինչև նոյեմբերի 1-ը, մոտավորապես վորոշել կոլտնտեսականների միջև բաշխվելիք յեկամտի չափը և տալ կոլտնտեսականներին աշխատանքային օրերի համաձայն նրանց հասանելիք ամբողջ յեկամտի յերկու յերրորդ մասը, այնպիսի հաշիվով, վոր յեկամտի մնացած մասը տրվի ամենաուշը մինչև 1932 թ. հունվարի 15-ը՝ վերջնականապես նրա հետ հաշիվ տեսնելով:

***

ԽՍՀՄ Հողժողկոմատը և Կոլտնտկենտրոնը պարտավորեցնում են կոլտնտեսությունների վարչություններին, շրջանային հողբաժիններին և կոլտնտմիությունններին կազմակերպել սույն վորոշման լայն քննարկումը այնպիսի հաշիվով, վոր ամեն մի կոլտնտեսական ամենաուշը մինչև ոգոստոսի 1-ը գիտենա յեկամուտների բաշխման կարգը:

Պարտավորեցնել հանրապետական հողժողկոմատներին, կոլտնտկենտրոններին, մարզային և յերկրային հողվարչություններին և մարզային ու յերկրային կոլտնտմիություններին կազմակերպել սույն վորոշման անշեղ կատարման մասնակցական ստուգումը:

ԱՅՍ ՏԱՐԻ ՎՈՉ ՄԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉԳԵՏՔ Ե ԹՈՒՅԼԱՏՐՎԻ ԸՍՏ ՇՆՉԻ ԲԱԺԱՆԵԼ, ՓՈՂՈՎ, ՑԵՎ, ՄԹԵՐՔՈՎ, ՀԱՍԱՆԵԼԻՔ ՑԵԿԱՄՈՒՏԸ։

ԽՍՀՄ-ի Հողժողկոմատը և կոլտնտկենտրոնի վարչությունը հիշեցնում են բոլոր կոլտնտեսականներին խորհուրդների 'ճ-րդ' համագումարի 'այն 'պարտադիր վորոշումը, վորտեղ ասված է հետևյալը՝

«Ցեկամուտների (թե փողով և թե մթերքով) վոչ թե յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի քանակի ու վորակի համաձայն, այլ ըստ շնչի բաշխումը շատ հանախ քարոզում են կուլակները և կոլտնտեսությունների մյուս թշնամիները, վորոնք փորձում են վիժեցնել կոլտնտեսական գործը։ Ուրիշի աշխատանքով ապրելու այդ սիրահարներին պետք է ամենավճռական հակահարված տալ, մինչև իսկ վտարելով նրանց կոլտնտեսություններից։ Բոլոր կոլտնտեսականների և կոլտնտեսությունների համար պետք է կանոն դառնա կոլտնտեսության ցեկամուտների բաշխումը հետևյալ սկզբունքով՝ ՈՎ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՑԵՎ, ԼԱՎ Ե ԱՇԽԱՏՈՒՄ, ՆԱ ԱՎԵԼԻ ՑԵ ՍՏԱՆՈՒՄ, ՈՎ ՉԻ ԱՇԽԱՏՈՒՄ, ՆԱ ՎՈՉԻՆՉ ՉԻ ՍՏԱՆՈՒՄ»։

ԽՍՀՄ-ի Հողագործության ժողովրդական
կոմիսար՝ [redacted]

Կոլտնտկենտրոնի վարչության նախագահ՝
Տ. ՑՈՒՐԿԻՆ

1931 թ. հունվարի 12։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍԽՀ – ՍՍՀՄ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0193345

ԳԻՆԸ 5 ԿՊԵԿ. (1/2 ռ.)

РАСПРЕДЕЛЕНИЕ ДОХОДА В КОЛХОЗАХ

Госиздат ССР Армении
Эривань—1931